Համիկ Բաղալյան

ՍՏԵՓԱՆՈՍ ՔԱՀԱՆԱ ԵՎ ՍՏԵՓԱՆՈՍ ԻՐԻՑՈՐԴԻ ԳՐԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԿԵՎՌԱՅՈՒՄ 13-ՐԴ ԴԱՐԻ 60-90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

12-13-րդ դարերում կիլիկյան Հայաստանի մենաստաններից որպես գիտական և մշակութային կենտրոն իր միաբաններով, վարդապետներով, մատենագիրներով ու նկարիչներով, գրիչներով և մշակութային այլ գործիչներով առանձնացել է Լամբրոնի հայ իշխաններին պատկանող Սկևռա վանքը: Աղբյուրները վկայում են, որ Սկևռա վանքը գտնվել է «հուպ ի բերդն անառ Լամբրոն»[1], որը Կիլիկիայի նշանավոր, անմատույց ամրոցներից էր՝ պատմության մեջ հայտնի Նեմրուն, Լամբրուն, Լամբրոն անուններով[2]:

ԺԲ և ԺԳ դարերի ձեռագրերի հիշատակարաններում Սկևռան բնութագրվել է որպես «մեծանուն անապատն», «մեծ ժողովարանս», «հռչակավոր անապատն», «յաստուածապահ սրբարանս մեծ ուխտիս», «մեծ անուն սուրբ ուխտս», «սուրբ մենաստանս», «մեծ և հռչակաւոր ուխտս», «գերահռչակ անապատս»[3]:

Կիլիկյան վանքերի՝ Արքակաղնի, Անկների, Դրազակի կողքին Սկևռան համարվել է «մանրուսման ականավոր կենտրոններից»[4]:

Վանքը հռչակված էր նաև իր հարուստ մատենադարանով, որը հիմնել էր Սկևռայի գրչության դպրոցի հիմնադիր Ներսես Լամբրոնացին:

Գիտական կյանքը մենաստանում մոտ 200-ամյա պատմություն է ունեցել: Վանքում գրչության արվեստի հետ միաժամանակ զարգացել է մանրանկարչության և որմնանկարչության արվեստը:

Մեծ համբավ են ունեցել Սկևռայի ձեռագրատան վարպետները: Պատվիրատուներից շատերը փափագել են, որպեսզի ձեռագրերը ընդօրինակվեին հատկապես այնտեղի հռչականուն գրիչների ձեռքով. «զի ի ձեռն գրչացն, որ անդ կատարեսցեն զփափագն իւրեանց գրութեամբ»[5]:

1260-90-ական թվականներին Սկևռայի գրչատանը աշխատել են վանքի միաբաններից Ստեփանոս անունով երկու գրիչներ: Ձեռագրական քննությամբ պարզվեց, որ Ստեփանոսներից մեկը իր ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում միշտ հիշվում է «ամենամեղ», «հոքնամեղ» կամ «բազմամեղ քահանա Ստեփանոս», իսկ մյուսը՝ իր հոգևոր անվամբ՝ «մականուն Իրիցորդի»: Ստեփանոս Իրիցորդին, որ հիշվում է նաև որպես Ղուկաս քահանայի որդի, նույնացվել է ժամանակին ճանաչված գրչության վարպետ Ստեփանոս Գոյներերիցացի հետ: Ալիշանը գրում է. «Ստեփանոս Գոյներերիցացց... կգուշակվի, որ երիցու որդի և ցեղէ էր ... երիցս յիշեալ յանապատիս Արմենի ... համարիմ զնոյն Ստեփանոս իրիցու որդի, որ յամի 1274 ընդօրինակեր զգրուածս ինչ Վարդանա

---

[1] Կ. Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961 թ., էջ 63:

[2] Ալիշան, «Սիսուան», Վենետիկ, 1885 թ., էջ 96:

[3] Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1988 թ., ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1984 թ.:

[4] Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941 թ., էջ 113:

[5] Մատենադարան, թիվ 5784 ձեռ., էջ 355ա:

մեծի վարդապետի և զայլոց ի սակս Կեռան թագուհւոյ»[6]: Պողարյանը ունի հետևյալ փոքրիկ նշումը. «Ստեփանոս քահանա, երիցորդի՝ նշանավոր գրիչ Սկևռայի 1272-97 թուերուն»[7]:

Հայ մատենագիտության մեջ Ստեփանոս քահանա գրչի անունը Սկևռայի գրիչների անունների շարքում ընդհանրապես չի հիշատակվում:

Սակայն այս երկու գրիչներից մեզ հասած ձեռագրական ժառանգությունը /մոտ 18 ձեռագիր/, որոնց մեջ բացի սովորական ձեռագրերի պատվերներից հանդիպում ենք նաև արքունական պատվերների, խոսում է այն մասին, որ երկուսն էլ եղել են ժամանակի ճանաչված գրիչներից, աչքի են ընկել գրչական հմտությամբ և վարպետությամբ:

Տարբեր է երկու Ստեփանոսների գիրը: Ստեփանոս քահանայի ընդօրինակած բոլոր ձեռագրերը գրված են միջին մեծության համաչափ, վարժ բոլորգրով: Ստեփանոս Երիցորդու ընդօրինակած ձեռագրերը գրված են և՛ բոլորգրով, և՛ նոտրգրով:

Ստեփանոս քահանայի գրչությամբ մեզ հասած ժառանգությունը մոտ 15 ձեռագիր է, որից 8-ը /2-ը թեական/ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում և կրում են 630, 759, 2630, 3073, 3816, 5784, 6764, 8590 համարները: Ստեփանոս Երիցորդուց հայտնի է ընդամենը երեք ընդօրինակում, որից մեկը Մաշտոցի անվան Մատենադարանի 780 ձեռագիրն է, մյուսը կրում է 499 համարը /մանրաժապավեն, Երևան/, իսկ երրորդի մասին տեղեկանում ենք 1619 թվին ընդօրինակած ձեռագրում պահպանված գրչության ժամանակի հիշատակարանից:

Ձեռագրերը տարբեր բովանդակություն ունեն: Ստեփանոս քահանան ընդօրինակել է Աստվածաշունչ /1/, Ավետարան /8/, Ճաշոց /1/, Մանրուսմունք /3/, Ստեփանոս Երիցորդին՝ Ավետարան /1/, Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» և Վարդան Արևելցու «Լուծմունք ի սուրբ գրոց Ժղլանք կոչեցեալ» գործերը:

Ուշագրավ է Ստեփանոս քահանայի երաժշտական տետրերի ընդօրինակումը: Սա վկայում է այն մասին, որ Սկևռան համարվելով «արվեստանոցը» գրչության և մանրանկարչության արվեստի, եղել է նաև մանրուսման կենտրոն, իսկ Ստեփանոս քահանան՝ ոչ միայն բեղմնավոր գրիչ, այլև երաժշտության հմուտ մասնագետ, ուսուցիչ:

Ստեփանոս քահանայի ընդօրինակությամբ մեզ հայտնի առաջին ձեռագիրը Ավետարան է[8], գրվել է 1263 թվին «ի մեծ ժողովարանս Սկևռայի» «յառաջնորդութեան սուրբ ուխտիս տեառն Մխիթարա եպիսկոպոսի»[9]: Այն գրվել է «սրբասեր քահանա» Հայրապետի խնդրանքով: Հիշատակարանում գրիչը հիշում է իր ծերացած հորեղբորը՝ Թորոսին որպես «զսնուցիչ մեր»[10]: Ձեռագիրը այժմ պահվում է Մատենադարանում և կրում է 8590 համարը: 224ա էջում պահպանվել է մատյանը ոսկով դրվագդրի հիշատակությունը. «Զոսկող սուրբ աւետարանիս զԱւգսէնդ սուտանուն աբեղայս աղաչեմ յիշել ի Տէր»: Ձեռագիրը նորոգվել է 1434 թվին Հովհաննես կրոնավորի կողմից[11]: 1451-ին այն «յոյժ փափաքանաւք»

---

[6] Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901թ., էջ 503: Սիսուան, էջ 96-7:

[7] Պողարեան, Ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի, 1968 թ. հ. Գ, էջ 414:

[8] Մատենադարան, թիվ 8590 ձեռագիրն ունի 11,5-8,5 չափսեր, 246 թերթ: Գիրը՝ բոլորգիր, գրությունը՝ երկսյուն՝ զարդարված կիսախորաններով և լուսանցազարդերով: Նյութը՝ մագաղաթ:

[9] Նույն տեղում, 242ա, բ:

[10] Նույն տեղում, 241բ:

[11] Նույն տեղում, 243ա:

ստացել է Մղտեսի անվանված քահանան[12], իսկ վերջին ստացողն ու նորոգողը Սրապիոն սրբասեր անվանված քահանան է, 1598 թվ:

1272, 1275, 1278 թվերին Ստեփանոս քահանան տարբեր պատվիրատուների խնդրանքով ընդօրինակել է Մանրուսմունք:

1272-ին ընդօրինակած խազգրքի[13] պատվիրատուն «պատվելի եղբայր» Գրիգոր քահանան է: Ձեռագիրը գրվել է ի հիշատակ Սկևռայի առաջնորդ Սիմեոնի: Ինչպես երևում է հիշատակարանից, Սիմեոնը եղել է Սկևռայի հոգևոր վարժապետներից. «լիշատակ... առաւել սնուցչին իւրոյ հոգեւոր տեառն և վարժապետի տէր Սիմեոնի»[14]:

1273-ին «ի սուրբ ուխտս Սկևռա» «քաջահանճար հոետոր եւ սրբազան» Հակոբ կաթողիկոսի առաջնորդության և Հեթումի որդի՝ «աստուածասէր եւ բարեպաշտն» Լևոնի թագավորության շրջանում գրվել է մի Ավետարան: Այժմ այն գտնվում է Ստամբուլի Թոքգաբը պալատին կից Ահմետ Գ-ի անվան գրատանը, ոչ մահմեդական գրքերի բաժնի ցուցակում և կրում է 122 համարը:

Ձեռագրի մասին առաջին անգամ ընդհանուր գծերով արտահայտվել, քննել և ուսումնասիրել է Արամ Անդրեասյանը[15]: Ձեռագրի ընդհանուր նկարագրությունից երևում է, որ «Սկևռայի Ավետարանը» բավական շքեղ է, հարուստ՝ ճոխ մանրանկարներով, լուսանցազարդերով, խորաններով /14 հատ/, ոսկեդրվագ և գունավոր զարդագրերով, 4 ավետարանիչների մանրանկարներով: Կազմի կաշին զարդարված է խաչերով, որոնց վրա կան թանկարժեք քարեր: Իշխում է ոսկին՝ զուգակցված գեղեցիկ գույներով: Ձեռագիրը գրված է նուրբ, լավ մշակված կիլիկյան մագաղաթի վրա միջին մեծության կանոնավոր բոլորգրով:

Ձեռագիրը գրել է Ստեփանոս «ամենամեղ» գրիչը: Հիշատակարանում հիշվում է ծաղկողի անունը՝ Հովասափ նկարիչ: Պատվիրատուն և ստացողը «հոչակաւոր ուխտիս Սկևռայի զարժանապատիւ» առաջնորդ տեր Սիմեոնն է, որը մեծ փափագով, «մածածախ պատրաստութեամբ հոգ տարեալ սուրբ մագաղաթի, և գեղապանծ գրով, արհեստակիտուած ոլորակաւք, բազմապայծառ զարդարուք, սքանչելափառ խորանաց, ոսկեճաճանչ խառնուածքով, յոքներանգ ծաղկանց պճնապաճոյճ հաւրինուածքով, ոսկեգիր դրոշմածիւք զտերունական անուանն փառազարդեալ, վերընծայեաց սրբոյ տաճարիս ...»[16]:

Հավանաբար այս ընդօրինակությունը նույնպես Ստեփանոս քահանայի աշխատանքներից է:

1275-ին «ի հոչակաւոր անապատս Սկևռայ» «բազմամեղ» քահանա Ստեփանոսը նորից ընդօրինակում է երաժշտական տետր[17]: Հիշատակարանում պահպանված տեղեկությունները հնարավորություն են տալիս իմանալ ձեռագիրը գրելու հանգամանքները: Այն գրվել է Մսրի «անաւրէն» իշխանի դեպի Կիլիկիա արշավանքների ժամանակ. «... ի թագաւորութեան Լևոնի՝ որդւոյ Հեթմոյ, յորում ըստ մեղաց մերոց զաւրացեալ անաւրէն իշխանն հարաւոյ ելեալ աշխարհս Կիլիկեցւոյ բազում զաւրաւք և ի սուր սուսերի մաշեալ զբնակիչս գաւառիս և զքաղաքս և զգեաւղս հրոյ ճարակ արարեալ և անթիւ բազմութիւն մարդկան ի գերութիւն վարեալ, բազում աւարաւ՝ ողջանդամ աշխարհ իւր դարձաւ:

---

12 Նույն տեղում, 244բ:

13 Պողարեան, Ցուցակ Եր. հ. Ե, էջ 485: ԺԳ դարի հայ. ձառ. հիշ., էջ 420:

14 Նույն տեղում, 163ա:

15 Ծողկաթ, 1966, էջ 94-98:

16 ԺԳ դարի հայ. ձեռ. հիշ., էջ 433-435:

17 Այուրմեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ և մասնաւորաց, Երուսաղէմ, 1935 թ., էջ 243: ԺԳ դարի հայ. ձեռ. հիշ., էջ 456:

Մնացեալքս ի լերինս և ի ծերպս վիմաց յահէ անաւրինին այսր-անդր դեգերեալ՝ ակն ունելով ողորմութեան և խնամոցն Աստուծոյ»[18]:

Ձեռագիրը գրվել է «պատվական քահանա» Հովհաննեսի խնդրանքով իր որդու՝ Կոստանդինի համար, որին որդեգրելով փոքր հասակից հասցրել է քահանայական աստիճանի և «կամեցաւ զի անմոռաց պահեսցէ գնա ի սրտէ, և փոխանակ աշխատութեան տրիտուր հատուսցէ մնա մասամբք աղաւթից և պատարագաց»[19]:

«Ամենաիմաստուն» քահանայի՝ Ստեփանոսի համար 1278-ին «ի հոչակաւոր անապատս Սկևռայ» «բազմամեղ քահանա և անպիտան գրիչ» Ստեփանոսը ավարտում է Մանրուսմունք-խազգիրքը[20]: Հիշատակում է ստացողի հարազատ եղբայր Կոստանդինին, նորընծա քահանա Կիրակոսին և Հովսեփ սարկավագին ու նրանց խնամող ու ուսուցիչ «զպատկառելի քահանայն ու զպատուելի ծերունին Դաւիթ»[21]:

Մատենադարանի թիվ 639 և 759 ձեռագրերի գրչական և կառուցվածքային նմանությունները ենթադրում են, որ 630 ձեռագիրը 759 Մանրուսմունքի պատճեն է, գրվել է Սկևռայում Ստեփանոս քահանայի ձեռքով[22]:

Ստեփանոս քահանայի հաջորդ ձեռագիրը Մաշտոցի անվան Մատենադարանի 6784 համարը կրող Ավետարանն է[23]: Այն ընդօրինակվել է 1283-ին «ի մեծանուն սուրբ ուխտս Սկևռայ» «ի հայրապետութեան տեառն Ցակովբա»: Ձեռագրի պատվիրատուն Հայոց «բարեպաշտ» Կեռան թագուհին է[24]: Հիշատակարանում կա այն վկայությունը, որ գրության թվին՝ 1283-ին, «բարենշան և բարեպաշտ անդրանիկ որդին արքային» Հեթումը ստացել է «ձիաւորութեան աստիճան» և ներկայանում է որպես տեր Լամբրոնի՝ «աստուածապահ դղեկին և այլ շրջակա գաւառացս»[25]: Հիշատակարանը մնացել է անավարտ[26]: Ձեռագիրը գրված է լավ մշակված մագաղաթյա թերթերի վրա. այնքի է ընկնում ճոխ մանրանկարներով, խորաններով և կիսախորաններով, լուսանցազարդերով: Գերակշռում է ոսկին՝ համադրված վառ գույներով:

Գրչագրում պահպանված հետագա հիշատակությունները վկայում են, որ այն նորոգվել է 1357-ին Անիում պ. Ալիսի և ըՌուզ խաթունի կողմից «դառն և դըժընտակ և յանբարի» ժամանակ: Նրանց կողմից ձեռագիրը դրվել է Անիի սուրբ Առաքյալ եկեղեցում[27]: Այս հիշատակությունը վկայում է Ներսես գրիչը ՊՁ

---

18 Նույն տեղում, 114ա:

19 Նույն տեղում, 114ա:

20 Մատենադարան, թիվ 759 ձեռ., ԺԳ դարի հայ. ձեռ. հիշ., էջ 483-484: Ձեռագրի նկարագրությունը՝ թերթ՝ 93, նյութ՝ մագաղաթ 14,5-10,5, գրություն՝ միասյուն, գիր՝ բոլորգիր, տող՝ 21: Մանրանկարչություն՝ կիսախորան, լուսանցազարդ: Պահպանակ՝ մագաղաթ 4, բոլորգիծ երկաթագիր, Ավետարան: Կազմ՝ կաշեպատ տախտակ, աստառ՝ դրոշմազարդ կտավ:

21 Նույն տեղում, 181բ:

22 Ա. Ամատունի, Ս. Էջմիածին, 1895 թ.: Ա. Մաթևոսյան, անտիպ աշխատանք:

23 Մատենադարան, թիվ 6784 ձեռ., թերթ՝ 270, նյութ՝ մագաղաթ 21,4-15,7, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, տող՝ 21, պրակ՝ 1-5/10, թ,դ,կ,/11, ե-ը, ժ-ճ/12, ղ/5: Մանրանկարչություն՝ ավետարանիչ՝ 4, խորան՝ 2, կիսախորան, լուսանցազարդ: Կազմ՝ թավշապատ տախտակ արծաթյա շրջանակով:

24 Նույն տեղում, 282բ:

25 Հաջորդ ընդօրինակություններում գրիչը անպայման Հեթումին հիշում է որպես Լամբրոնի տեր:

26 Նույն հիշատակարանը պահպանվել է ամբողջությամբ Մատենադարանի թիվ 8509 ձեռագրում:

27 Նույն տեղում, 265ա:

/1357/ թվին: Ձեռագրի վերջին ստացողն է անապցի Հակոբի որդի Օվակիմը: Ավետարանը նրա կողմից դրվել է Անապատի Ս. Ստեփանոս նկեղեցում «ի հայրապետութեան սուրբ Էջմիածնի տեառն Ղազար սրբազան կաթողիկոսին, թվին 1731»[28]: Կան հիշատակություններ գրված 1563, 1615, 1897 թվերին:

Հաջորդ ձեռագիրը[29] Նոր Կտակարանի ընդօրինակություն է 1285-ին «ի ձեռն Ստեփանոսի ամենամեղ և անպիտան գրչի ու անարժան քահանայի... ի ժամանակս աստուածապաշտ, աստուածահաճոյ կրկին արքայի Լեւոնի որդւոյ Հեթմոյ՝ տէրութեան աստուածապահ բերդիս Լամբրոնի»[30]:

Ձեռագիրը Գևորգ Սկևռացի վարդապետի թելադրությամբ ստացել է «սրբասնունդ պատանի» Խաչատուրը: Հիշատակարանի շարունակությունը պարզում է, որ գրվել է Ստեփանոս Գոյներերիցանցի ձեռքով, Խաչատուրը եղել է Գևորգ վարդապետի աշակերտներից. «առ որում կայր ի վարժ կրթութեան բանի և գրոյ ուսումնասէր դպիրն Խաչատուր»[31]: Ստեփանոս Գոյներերիցանցը շարունակում է. «Եւ դարձեալք յԱստուած խրախուսեալք իմով ձեռամբ Ստեփանոսի Գոյներերիցանցի փցուն գրչի՝ ստացան զաստուածային գիրս սրբոց մարգարէից և զսրբագրուց ոմանց յետն հարիւր երեսուն եւ եթն /1283/ թուականի, ի մխիթարութիւն ինքեանց հոգւով... եւ ի յոյս բարեաց յիշատակի ստացողացն եւ աշխատողիս գրչի եւս...»[32]: Ինչպես երևում է Ստեփանոս քահանայի հիշատակությունից, Ստեփանոս Գոյներերիցանցը գրելու նյութի հարցում օգնական է եղել. «ուգնական եղեւ ի նիւթ գրոյս»[33]:

1290-ին Ստեփանոսը երկու ձեռագիր է ընդօրինակում, երկուսն էլ նկարազարդ Ավետարան: Առաջինը Մատենադարանի թիվ 2630 ձեռագիրն է[34]: Ստացողն է Թորոս քահանան, որն ուսումնառության փափագով Կոստանդնուպոլսից «ի գաւառէն, որ կոչի Ակռտաւն, ի բերդէն, որ կոչի Շիկաւն» պանդխտել է Կիլիկիա, շրջել անապատներն ու վանքերը և «առաքինութեան վարուք արժանի լեալ քահանայութեան աշտիճանի»[35]:

Հաջորդ Ավետարանի ստացողն է «ամէնիմաստ» քահանա Ստեփանոսը, մականուն Սէնեֆցի. «զի ըստ բարէյաւժար կամաց իւրոց, մեծաւ բաղձանաւք ստացաւ զքառավտակ սուրբ աւետարանս»[36]:

1293-ին Ստեփանոս գրիչը ավարտում է մի Ավտարան ևս, որը Մատենադարանի թիվ 5784 գրչագիրն է[37]: Արքայակաղնո սուրբ ուխտից ոմն վանական Հոհաննես կամենում է պատվիրել Ավետարան «ի յիշատակ և ի լրումն

---

28 Նույն տեղում, 216բ, 267բ:

29 Լույս 1906 թ., էջ 1219–20: Ալիշան, Հայապատում Բ, էջ 496: ԺԳ դարի հիշ., էջ 617–18:

30 Նույն տեղում, 1065բ:

31 Նույն տեղում, 822բ:

32 Նույն տեղում, 822բ:

33 Նույն տեղում, 1065բ: Գրելու նյութի հարցում օգնական է եղել «կին ոմն», որի անունը չի հիշվում /822բ/:

34 Մատենադարան, թիվ 2630 ձեռ., ԺԳ դարի ձեռ. հիշ., էջ 658–659: Ձեռագիրը «բազում աշխատութեամբ» կոստել է Կոստանդին ոսկերիչը /304ա/:

35 Նույն տեղում, 355ա:

36 Կյուլեսերեան, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1961 թ., էջ 1338–39: ԺԳ դարի ձեռ. հիշ., էջ 659–60:

37 Ձեռագրի նկարագրությունը՝ թերթ՝ 360, նյութ՝ մագաղաթ 26-18,5, գրություն՝ երկսյուն, գիր՝ բոլորգիր, տող՝ 19: Մանրանկարչություն՝ տերունական՝ 9, ավետարանիչ՝ 4, խորան՝ 10, կիսախորան, լուսանցազարդ: Կազմ՝ թավշապատ տախտակ՝ կոստղապատ մետաղյա 4 անկյունազարդերով:

քրիստոսասէր ըղձից իւրոց»[38]: Բայց անկատար է մնում ցանկությունը, վախճանվում է: Նրա հարազատներն ու սննդակիցներ Ստեփանոս փիլիսոփան և Գրիգոր քահանան «առեալ զնիւթ պատրաստեալ յեղբարէնն, եկին ի հոչակաւոր ուխտն Սկևռայ, զի ի ձեռն գրչացն որ անդ կատարեցին զփափաքն իւրեանց գրութեամբ սուրբ Աւետարանիս»[39]:

Ահա Ստեփանոս գրիչը կատարում է նրանց խնդրանքը. «ըստ տկար չափոյ ծերութեանն զառանցեալ տիոյ և պակասեալ պատշաճ պիտոյից այսր արուեստի»[40]: Ինչպես հաստատում է հիշատակագրությունը, ավետարանիչների նկարները նկարել և ցանկերը գրել է Սիոն «նուաստ քահանան» «Զյետին գծող ցանկիցս և զնկարող սուրբ աւետարանչացն զՍիոն նուաստ քահանան աղաչեմ յիշել»[41]: Խորանները, կիսախորանները, լուսանցազարդերը այլ նկարչի գործ են:

1295-ին ծերության հասակում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում Ստեփանոսը հայտնում է, որ նույն թվին վախճանվել է իր եղբայրը՝ Կոստանդինը՝ «սուգ անբերելի եթող մեզ»[42]: Եղբոր որդիների՝ Հովհաննես քահանայի, Լևոն սարկավագի և Հովսեփ պատանու խնդրանքով «ի պակասեալ ամաց եւ ի զառանցեալ տիոց և ի ծերութեան հասակի» ավարտում է Ավետարանը «յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց, եւ ի վայելումն յառաջասացեալ արեան մերձաւորացս»[43]:

Ստեփանոս քահանայի գրչին է վերագրվում Մատենադարանի թիվ 3816 գրչագիրը՝ «Մեկնութիւն Յովհաննու աւետարանին Յովհաննիսի Ոսկեբերանի»[44]: Ձեռագիրը քայքայված վիճակում է. սկզբից, միջից և վերջից թերի: Բացակայում է գլխավոր հիշատակարանը, բայց բոլոր գլուխների վերջում կան մեծ և փոքր հիշատակագրություններ: Ձեռագրի ստացողն է Բարսեղ քահանան: Գրիչը՝ «զմեղուցեալ գրողիկս» Ստեփանոսը խնդրում է ողորմությամբ հիշել ստացողին, «ծնողաց իւրոց և ամենայն եղբարց սուրբ ուխտիս Սկևռայի»: Սկևռայի հիշատակությունը և գրչության նմանությունը թույլ է տալիս այս ձեռագրի գրիչ Ստեփանոսին նույնացնել Ստեփանոս քահանայի հետ:

Ինչպես նշվեց, Ստեփանոս Իրիցորդու ընդօրինակություններից է Մատենադարանի թիվ 780 գրչագիրը՝ «Կոչումն ընծայութեան Կիւրղի Երուսաղէմացւոյ»[45]: Գրչության թվականը հիշատակված չէ: Հիշատակարանում գրիչը, որն իրեն անվանում է «մեղուցեալ գծաւոր», «անարժան աշխատողս», խնդրում է ողորմությամբ հիշել ձեռագրի ստացողին՝ Կոստանդին քահանային, «ծնողաց իւրոց» և «ամենայն եղբարց սրբոյ մենաստանիս Սկևռայիս և ծնողաց իւրեանց»[46]:

---

38 Նույն տեղում, 355ա:

39 Նույն տեղում, 355ա:

40 Նույն տեղում, 355բ:

41 Նույն տեղում, 278բ:

42 Արվանձտյան Գ., Թորոս Աղբար Բ, Կ. Պոլիս, 1884 թ., էջ 343-44: ԺԳ դարի ձեռ. հիշ., էջ 753-4:

43 Մատենադարանի թիվ 4825 ձեռագրի գրիչը Ստեփանոս քահանայի եղբորորդին է՝ Լևոն դպիրը: Նա ընդօրինակել է Գեորգ Սկևռացու «Մեկնութիւն Եսայեայ» գործը: Լևոնը հիշում է հորը՝ Կոստանդինին, որ «յայսմ ամի հանգաւ ի Քրիստոս», հորեղբորը՝ «պատուական քահանա» Ստեփանոս գրչին, հարազատ եղբորը՝ Հովհաննես քահանային և «զայլ եղբարսն իմ և ծնաւղսն իմ»: ԺԳ դարի ձեռ. հիշ., էջ 751:

44 ԺԳ դարի ձեռ. հիշ., էջ 649-51:

45 ԺԳ դար ձեռ. հիշ., էջ 802: Ձեռագրի նկարագրությունը՝ թերթ՝ 352, նյութ՝ թուղթ, մեծություն՝ 29.4-17, գրություն՝ միասյուն, գիր՝ շղագրանման բոլորգիր, տող՝ 21: Պահպանակ՝ մագաղաթ 4, բոլորգիծ երկաթագիր, Ավետարան, կազմը՝ կաշեպատ տախտակ, աստառ՝ սև կտավ:

46 Նույն տեղում, 251ա, 227բ:

Ձեռագիրը երկու գրչի աշխատանք է: Ստեփանոս Իրիցորդու ընդօրինակումը ԺԱ պրակից է: Մինչև ԺԱ պրակը գրել է Սմբատ գրիչը: Ցա էջից սկսած գրիչը փոխել է իր ձեռագիրը. սկսել է գրել մեծ բոլորգրով՝ ստորին լուսանցքում թողնելով հետևյալ հիշատակագրությունը. «Գրոցս տէրովն հրամանաւն մեծցուցի զգիրս»[47]: Գրիչը քարի հիշման է արժանավորում ստացողին և «յանգուցեալ աստուածասէր հօրն իւրոյ Ցոհաննէսի քահանայի և բարեպաշտ մայր իւրոյ»[48]: Ձեռագիրը վերջին անգամ նորոգվել է 1632-ին /ՌՁԱ/, «Տէր Մինաս քաջ դաբունապետի» կողմից, որը նաև ձեռագրի ստացողն է:

1297-ին «ի մեծ ժողովարանս Սկևռայ» Ստեփանոս Իրիցորդին ընդօրինակել է մի Ավետարան[49]: Ձեռագրի ստացողը գրիչն է՝ «բազմամեղ և անարժան քահանան»: Գրչագրելու հանգամանքների մասին գրիչը գրում է. «Զի թէպէտ և ոչ էր արժամանակս ձեռնտու այսմ արհեստի ի քաղում և ազգազգի վշտաց ի ներքին և յարտաքին թշնամեաց և ևս թէպէտ և զառանցեալ ախտք և պակասեալ ի զօրութենէ և ի պատշաճ պիտոյից, այնքան կարացեալ լնուլ զտեսչանս իմ»[50]: Ինչպես հիշվում է հիշատակարանում, Ստեփանոսի հայրն է Ղուկաս քահանան, մայրը՝ Թագերը: Հիշվում են նաև «զեղբարք սրբոյ մենաստանիս Սկեւռայի»: Ավետարանը հետագայում գնել է Թոքատի եկեղեցու երեցփոխանը նույն եկեղեցու համար: Ասպատակությունների ժամանակ /թիվը հայտնի չէ/ կողոպտվում է եկեղեցին, թալանվում է նաև Ավետարանի արծաթապատ կազմը: 1498-ին Հովհաննես քահանան, որը Զարխափան եկեղեցու քահանաներից էր, կազմում է Ավետարանը: 1653-ից ձեռագիրը գտնվում է Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցում /Կ. Պոլիս/[51]:

Հայոց Կեռան թագուհու հրամանով Ստեփանոս Իրիցորդին ընդօրինակել է Վարդան Արևելցու «Լուծմունք ի սուրբ գրոց Ժղլանք կոչեցեալ» աշխատությունը[52]: Գրության թվականը չի հիշատակվում: Ալիշանը Ստեփանոս Իրիցորդուն նույնացնելով Ստեփանոս Գոյներերիցանցի հետ նրան է վերագրել նաև այս գործը՝ թվագրելով 1274 թիվ[53]:

Գրիչը խնդրում է արժանի աղոթքով հիշել «զսուրբ վարդապետն Վարդան» և ստացողին՝ մայր թագուհի ամենայն հայոց «զբարեպաշտ տիկինն և զիսաչընդուս բարձողն» Կեռանի[54]:

13-րդ դարի 60-90-ական թվականներին կիլիկյան Սկևռա վանքում գործած Ստեփանոս քահանա և Ստեփանոս Իրիցորդի գրիչները իրենց շնորհալի ծառայությամբ մեծ ներդրում ունեն հայ մշակութային ժառանգության մեջ իրենց ընդօրինակությամբ մեզ ավանդած հիշյալ ձեռագրերով:

---

47 Նույն տեղում, 9ա: Լևոն Խաչիկյանը Սմբատ գրչին նույնացրել է Մատենադարանի թիվ 3412 ձեռագրի գրչի հետ և անթվական այս հիշատակարանը տեղադրել 1316 թվաշարքում: ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1950 թ., էջ 123-4:

48 Նույն տեղում, 71ա:

49 Մանրաժապավեն, թիվ 499, Երևան: ԺԳ դարի ձեռ. հիշ., էջ 801:

50 Նույն տեղում, էջ 801:

51 Բանասեր, 1904 թ., հ. 1, 1905 թ., հ. 7:

52 Պողարեան, Ցուցակ Երուսաղեմի, հ. Գ, էջ 414: ԺԳ դարի ձեռ. հիշ., էջ 419-20:

53 Ալիշան, Սիսուան, էջ 96:

54 Պողարեան, նույնը, 72ա, 24ա: